

«...ՄԵՐ ՎԵՐԻՆ ԱՏՅԱՆԸ ՄԵՐ Ո՞ՒՆ Է»

Պարզ կա գիշեր է՝ խեցու մեջ ներ-
բաշված, իրենց խի սրտի բարախ-
տունից վեր թռչող, կյանքի հավեր-
ժանության փիլիսոփայությունը մեկ
խաղաղ ակնթարթի մեջ խոստացրած
մարդկանցնո՞ւմ, որոնք գոյատևում
են մի բարի լուր լսելու հավատով:

Պատահանից երևացող տեսարանն
է՞ որում բարացած հատույի պես,
որտաճմով է՝ պոլիէթիլենով ամփոփ
ված շրջանակներով, իրար վրա
անփոփոխ դարձված դարձերով, ձիգ
յայտված ծանր ներքնակներով,
դուրսդուրս ծածկողներով: Ու կար-
գում են բազարի մեծ վախ՝ սար-
սափր, գզում են, որ մարդ գատարկ
ու դաժան օրը մարտել չի կարող
անգամ անկողնում: Վախը արյուն
է խոժել, վախը մարել է կյանքի
համար, անգամահատել է հավատը:
Մարտափ կա քաղաքի գլխին կախ-
ված, սարսափ, որ գիշերվա հետ
խոստանում ու գորշ կերպարանք ա-
ռած, ցցվում է օդում:

Ինչ անեն մարդիկ, սա ոչ խելի
պատերազմ է, ոչ հիտազգայության,
ոչ ուժի, ոչ տակտիկայի, ոչ իմա-
ցության, սա բնայն է՝ նախահնա-
մունքային կամքը բամահարած:

Պարզ կա գիշեր է՝ խեցու մեջ
ներբաշված քաղաքով...

Աստղերի անկյանք փայլից ձիգ
լեռնապարը երիզվել է հորիզոնին
ու հենց երիզից այն կողմ դարա-

կուլ տա
Գիտեն տղաները, բայց էլի գը-
նում են: Ու ակամա հիշում են
Կամոյի խոսքը. «Մեր ամենավերին
ատյանը մեր անհանգիստ ոգին է,
որն այնքա՞ն անաշտ է...»:
Ու գիշերվա ֆոնին, իմ աչքին ուր-
վագծվում է հրետանային մարտկո-
ցի հրամանատար, գինված ուժերի
սպա Կամո ներսիսյանի կերպարը՝
անակախ, մշտաթարթ էներգիայով,
հատու խոսքով, դուսպ հուժկով,
համակրելի...

Անհրաժեշտության բերումով այ-
սօր նա, իր մարտական ընկերոջ՝
Լենդրոջ Գրիգորյանի հետ քաղաք
էր եկել և ընձեռված կարճ ժամա-
նակահատվածում մենք գրուցեցինք,
բոլորովին էլ ոչ այն կանխակալ
մտադրություններ, որ պիտի հողված
գրվի, պարզապես, միշտ էլ հա-
ճելի է լինել գործին այդքան բա-
շատելով մարդկանց զուցակիցը,
չնայած տեղեկությունների ու ման-
րամասնությունների մեջ բավակա-
նին ժլատ հրամանատարը բավա-
րարվում էր միայն ասելով. «Մեր
և մեր ազգի ճակատագիրը մեր
ձեռքին է, ուրիշը կարող է նեցուկ
լինել կամ կերակրել ժամանակակի-
րապես, բայց ուրիշը մնում է ուրիշ՝
իր հոգսով, իր ցավով ու իր... շա-
ճով, ուրիշն ապավինելով կարելի է
միայն խարխուլ սեփական տան

սպում են... Ինչ արած, պատերազմ
է...»
Կիսուսի ամբողջության մեջ
առավել քան առեղծվածային գուն-
դը տիրաբար հսկում է աշխարհը,
հսկում է, տեսնում, նկատում և
երևի թե պահ է տալիս իր անշուր
օվիլանների տեղեկական ծփան-
քին:

Մի պահ սարսում են այն մտքից,
որ մարդը հանձարեղ ու մարդը...
արյունարբու, հասել է այնտեղ ու
ցնծացել իր տարեգիր լինելուց
Լուսին էլ հասան, Մարտ էլ, հայկե-
լու տագնապը չլինի՝ Արեգակն էլ
կհեծնեն, միայն թե տիրեն, զգա-
լին, մխրճվեն առեղծվածի մեջ,
առեղծվածը թարգմանեն կերպերեն
ու վրեն գրեն՝ էվրիկա՞: Գրեն ու
չզգային, որ դա գուցե այնքան ան-
թույլատրելի է, որքան արարի հետ
հարցադրույց կազմակերպելը: Նա-
յում են լուսին, կոշտ օրվան, ար-
դեն գծվել հասցրած քա-
մուց դիվաճար ծառերին, սարսու-
ռով լսում հեռվից արձագանքվող
խուլ պայթյունը, հիշում լեռների
ուսագծին սթափ կանգնած Կամոյին,
Ամենին, այդ գծվար օրերին նրանց
այնպես կարոտող դեռատի կանանց
և քանիցս փուլ գալով մտածում, որ
մարդու անկուշտ աչքի ընդգրկման
շառավիղը անցնում է բնության ոգու
միջև և գրա համար է, որ Պահ է չի

Դ Ի Մ Ե Ն Կ Ա Ր Ի Ռ Ի Ր Վ Ա Գ Ի Ծ

(Կ Ա Մ Ո Ն Ե Ր Ս Ի Ս Յ Ա Ն)

նակալ պղծատ «եղբայրն» է, հորի-
զոնին՝ նրանք, որոնց ծննդյան
պահին ձակատաղիրը պահ մի
կնճռոտել է, ակնածել ու տագնա-
պել...

Ցուրտն ասես զգայարաններով
ներս է հոսում, թափանցում ոսկրից
մեջ, և տանը ճրթճրթացող վառա-
րանի տաքն էլ ուրիշ ջերմություն
է, ոչ այս սարսուռի դիմաց: Սա այն
զգացողության սարսուռն է, որ այն-
տեղ, հորիզոնի պարագծի վրա,
ներս են՝ անարյուն լուսնին ու
աստղերին այնքա՞ն մոտ ու տաք
երազներից այնքա՞ն հեռու, թշնամու
գավթի խճճանքում և... սրտի
թրթիռին ունկնդիր:

Պարզ կա գիշեր է՝ խեցու մեջ
ներբաշված քաղաքով...

Գարուն ավետող քամին կայտառ-
կայտառ վեր ելավ տեղից, իրար
բերեց փշերը, ուժ հավաքեց, սկսեց
խոտուտ տալ ծառերի ավյած ճյու-
ղերը:

Ներսում՝ հողկարող վառարանի
նվազող ձայնը ավելի է խոստացնում
ցրտի իրական զգացողությունը, որը
ամբողջանում է պատահանին զարն-
վող սառած շորի փեշի զխեցողով...
Ու կրկին հիշեցի հորիզոնը՝ հսկող
տղաներին, բոլորին, որոնց գիտած
կամ չգիտած, որովհետև անկախ
անհատականությունից, նրանք բո-
լորն էլ ընդառաջ են գնացել թշնա-
մու կողորդում կոշտ պատառի պես
խրված հայրենիքի օգնության կան-
չին, որոնց համար սեփական տան
շեմը ասվածը ողջ հայության շեմն
է, իր կնոջ, մոր, բոլոր պատիվը
ամեն հայրենու պատիվը՝ նրանց,
ովքեր բաշատելով և իրապիկ են
փող աշխատելու և իրապիկ են
նիզմին, բայց գրպանում ամբարած
ոչ կտրիկ գումարով դուրանի լավ
տղերից ծխախոտ են առնում, որ
հետևերը սահման տանեն, որ գիշե-
րը վառեն դառնակը, որ առավել
սթափ լինեն, որ իրենց հետ հսկին
դուրանի ջրապիղը տղայի ու երե-
խայի անվրդով րունը, որ այն-
րիկին ամսով շտանած իրենց սողան
գնա ու նրա դուրանի շողարձակող
շուկայներին նայի ու... թուրք

սյունը: Ինչ ասեմ, թե մեր հայր-
դիր դեռ երկար շարունակեն ծը-
վարել ամենատարածված ապաստա-
րաններում և խուլս տալ զորակո-
չից, ապա դեռ երկար ենք վիզ
ձուլու և ակնկալելու: Բայց էլի,
միևնույն է, նրանք՝ թե ուժով պի-
տի գան, ավելի լավ է ապաստա-
րանի մեջ խորշ փորեն ու իրենց
վախով պարփակվեն: Ով պիտի գար,
վաղուց արդեն այնտեղ է և իր
սուրբ արյամբ տարեկրություն է
գրում: Ազգի ձակատաղիրը ընտրյալ
ներն են գրում, իսկ ընտրյալները
ունկնդիր են միայն սեփական ներքին
ձայնին ու երկնավորի չզրկված կամ-
քին, որի շափանիչը ճշմարիտն է:
Ասաց ու լռեց մի պահ, հետո ինձ
համար բավականին անակնկալ տը-
վեց մտքումս խմորվող հարցի շեշ
տակի պատասխանը. «Տա՛ Աստված,
որ խաղաղություն հաստատվի, բայց
միևնույն է, թիզ՝ հողն անգամ
և... դեռ երկար սթափ լինենք: Էլի
տա՛ աստված, որ որդիներս՝ Մը-
հերը, Սուրենը, Հրաչիկը, Վաչիկը
(Տերը պահապան) հսկեն խաղաղ
սահմանների անդրերը...»: Եվ
զրույցին հազվադեպ միջամտող
Լենդրոջն ավելացրեց՝ իմ Անդրանի-
կըն ու Տիգրանն էլ...

Հիրավի, տա՛ Աստված, տա՛ ի
հաստատումն ձեր մեծ կամքի:

Պարզ կա գիշեր է՝ խեցու մեջ
ներբաշված քաղաքով...

Եվ գնացին Կամոն, Լենդրոջը,
գնացին, որ իրականացնեն նախա-
խնամության առաքելությունը, գնա-
ցին, որ մեծ սերը աշխարհի, տաք
հողեղենների նկատմամբ թանձրաց-
նեն, պահ տան ուղեղին, ուղեղին,
բայց ոչ սրտին, որ շերտերն զգաց-
մունքների տեղատարափից, որ ե-
րազները չհպատակեն իրենց, որ թե
պետք է՝ ձեռքը դնեն ձգանին, որ
հակառակ կողմի նախահարձակ
ճայթյունը լուի... Ու էլի հիշեցի
Կամոյի խոսքը. «Հավատացեք, որ
ոչ մի իսկական գինվոր մարդ սպա
նելուց չի ցնձում, հակառակորդն էլ
հողիղեն է, որին մայր է ծնել, նա՛
էլ կրազներ ունի, նրա կրուտան էլ

ներում, գայրացած առեկսում է
և մոլորակի վրա հայտնվում են քա-
ղաքակիրթ աշխարհի ձեռնարկներ
սաք կետեր. երեկ դեռ քեզ աղ ու
հացով դիմավորած եղբայրը աղը
լցնում է աչքերից մեջ ու... մորթում:
Ու էլի հիշում եմ Կամոյի խոսքը.
«Երբ ծովից ծով Հայաստան կորց-
րինք, կորցրինք մաս-մաս, աշխար
հը ոչ ոքի չդատապարտեց, իսկ երբ
փորձեցինք կիսատ սրտին միացնել
մյուս տաք կեսը՝ մոլորակը սենե-
վեց, «եղբայրն» էլ ծառս եղավ,
ծառս եղավ ու ամառից մեր մամ-
ոտս խաչքարից: Ու ազդեցոր
որակվեցինք: Այնուհանդերձ, կա
հիրավի մի ճշմարտություն՝ ուժն է
ծնում իրավունքը: Այս պիտի լինի
մեր կարգախոսը, քանի որ թշնամին
հաշվի է նստում միայն ուժեղի հետ:
Իսկ մեր արքերը խոստանում են,
խոստանում են արդեն ազգային բա-
նակի միջուկով: Հրաչե՛ք տղերք
են, տարբեր անհամեմատ համարակա-
րարի: Հիշատակեմ Սուրեն Գաբրյա-
նին (Թուժանյան), Խորեն Դավթյա-
նին (Իշխան), Ռուբեն Աստամյա-
նին (Իշխան), Արամ Մարդ-
յանին (Գորիս) ... Անսահման
է նրանց հաղթանակի կրողը:
Ավելին չեմ ասի, սա գուրա է
սիրողական հարցի պատասխանի
սահմաններից»:

Պարզ կա գիշեր է՝ խեցու մեջ
ներբաշված քաղաքով...

Ու էլի սփրթած օրվա միջով հա-
յացքս ուղղում եմ հորիզոնի գծին,
որտեղ նրանք են՝ Կամոն, Կամոնե-
րը, Տղաները, խաղաղության հրեշ-
տակները: Բնավ չեմ կարեորում,
թե նրանցից որ մեկն է ուղեկան
գործի ավելի գիտակ, որ մեկն ավե-
լի լավ քարտեզ կարող գիտե, որ
մեկն էլ ավելի լավ նշանատու:
Կարևորն այն է, որ նրանք Այնտեղ
են, Այնտեղ, որի ապաստարանի
տարբերությունում արձանագրված
նիշը Արարի կամոք ի վերստ է
գրված:

Պարզ կա գիշեր է՝ խեցու մեջ
ներբաշված քաղաքով...

ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ՄՇՏՆՁԵՆԱԿԱՆ

Հ Ա Ռ Ն Ո Ւ Ս

Հողը հայի համար սուկ
տարածք, ոտքի վրա կանգնե-
լու տեղ չէ, ուրիշների փոք-
րությունն ընդգծելու, ուրիշ-
ների ունեցածը վավթելու նա-
խապայման ու սուբստանց չէ:

Հողը մեկ համար առաջին
հերթին ծննդավայր է, վառ
թոցիր, հիշողություն, նախնի-
ների գերեզման և հուշարձան:
Մեր ծննդով արդեն իսկ սրբա-
գործում ենք հողը, պորտալա-
րով կապվում նրան, փոխա-
դարձ իմաստավորում միմ-
յանց կյանք և դառնում ան-
բաժան միություն: Մենք կըռ-
վում ենք այդ հողի համար,
պաշտպանում այն, մենք մեր
արյամբ օծում ենք նրա վիրա-
վոր մարմինը և դառնում ու
փառաբանում այն: Նախա-
տակվում և հառնում Գորից:
Կարճ մի ակնթարթ, երբ դա-
դարում են մարտերը, մեր ոգին
ինքնարտահայտման ձև է որո-
նում, երգում ենք, բանաստեղ
ծություններ ենք արտասա-
նում, քանդակում ենք, ի վեր-
ջո, հասցնում ենք ապրել
մեկավարի, հասցնում ենք մեր
հոգու նվիրակներ դարձնել
սերունդների սեփականը, նը-
րանց շոջափելին, դաս առնե-
լին, նրանց...

Պատերազմում էր երևա-
նաբնակ Լեոն Նաչատրյանը,
թե՛ ստեղծագործական գոր-
ծուղում էր եկել սահմանամերձ
գոտի: Նրա հոգում ո՞ր պգա-
ցումն էր գերիշխում սահման-
ների փառապանությունը, թե՛
այդ սահմանների մոտ նախա-
տակվողների անմահացումը...
Դժվար է գատել: Սահման
ասվածը տարողունակ է: Այն
իր մեջ համարյա ներառում է
հող հայրենից ամբողջութե-
ամբ՝ իր կենցաղով, մշակույ-
թով, հոգեբանությամբ: Դա
սուկ կոռնիձոր կամ Դավիթ
Բեկ չէ, Հարթաշեն ու Պառա
վաքար չէ: Եթե մի քիչ ապա-
վինենք լրագրողի երևակայու-
թյանը, կարելի է ասել՝ դա
համայն հայության բաբախող
սիրտն է, հող կոչված ոգու
խոսքման համապարփակ իղ-
ձը...

Զգիտես, պատահակա՞ն ան
վառում է «ժայռ-1»-ը, թե՛
նպատակային հավանաբար,
ոչինչ հենց այնպես չի լինում:
Հարթաշենի շոկատն իրեն ան-
վանակոչեց «ժայռ-1» և իրոք
ժայռի պես սկսեց հսկել քա-
ղաքն իր ողջ տարածքով,
շրջանի գյուղերը: Ասել, որ
շոկատը պրոբլեմներ չունի,
սխալ կլինի: Բայց այսօր
դրանց մասին չէ, որ պիտի
անդրադառնան: Պիտի խոսեն,

թե ինչպես ծնվեց այդ վայրում
հուշարձանի կառուցման գա-
ղափարը: Չարմանալի չթվա,
այո, կոխվ և... հուշարձան:
Ընդամենը մի քանի մետրի
վրա հրետակոծություն, կրա-
կոցներ, իսկ այդին՝ հուշար-
ձան է հառնում:
Լեոնը շոկատում հրետանա
վոր էր: Գործի էր դնում հրե-
տանից, եթե պետք էր, հեր-
թապահում էր կրակակետում,
զինվորի ամենատարբեր պար-
տականությունների մեջ էր:
Լեոնտեսանտն ասես մոռացել
էր քանդակագործի իր կոչու-
մը և անկասկած մի պահ ծխում

և բարձրաձայն մտորում էր
իրամանատարի՝ Սամվել Լա-
յալարյանի հետ: Լեոնն այդ
պահին զինվոր չէր, նա վե-
րջափն դարձել էր դեպի իր՝
քանդակի աշխարհը, վերափն
քանդակի աշխարհը, վերափն
նա մտովի իր գործերի հետ
էր, այնտեղ, ուր դիպչել է բան
էր, պակասագործի ձեռքը:
Գտնի՞ր
դակագործի մարդասիրտային
համալիրը, Հակոբ Մեղապար-
տի արձանը, Ֆիլիպսոսիայի
շեմքը...

Հետագայում՝ հուշարձանի
բացումից հետո Լեոնն ասում
է.

— Այդ պահին, երբ մտորում
էի գոհված տղերքին նվիրված
հուշարձանի կառուցման մա-
սին, հասկացա, որ ոգու
պարտք ունեմ հավասարա-
պես բաշխելու և հայրենիքին,
և իմ արվեստին: Ես պարտա-
վոր էի գոհված ընկերներիս
եիշատակը հենց սահմանա-
մերձ գյուղում հավերժաց-
նելու...

Առաջին պրոբլեմը, որ ծա-
գել է, քարի հարցն է եղել:
Հրամանատարը հուսադրել է.
«Կարձուրը կառուցել ցանկա-
նակ է, մնացածը ինքներս
կանենք»:

Հուշարձանն առաջին հա-
յացքից անխորտակ, հուժկու
ժայռ է հիշեցնում՝ խաչի ու
հավերժության խորհրդանիշի
համադրմամբ: Այն սովորա-
կան չէ ոչ կառուցողով, ոչ
մտահղացմամբ, ոչ էլ իր մեջ
ներառած նպատակով: Տաս-
նյակ ու տասնյակ հուշար-
ձաններ են կառուցվում, երբ
պատերազմը ավարտվում է,
երբ վերջանում է արհավիր-
քը, երբ որոշակի խաղաղվում
են ժամանակները: Բայց մեր
օրերում, երբ չհայտարարված
պատերազմն օրեցօր վառն-
գավոր չափեր է ընդունում,
երբ մշտապես գնդակոծվում
են սահմանները, գոհվում են
մարդիկ, ավերվում տներ, բնա
կավայրեր, թվում է, այդպիսի
միտքն անգամ պետք է դիա-
վի որպես խիպստում: Քիչ չի
պատահել, երբ աշխատանքի
պահին թշնամից սկսել է գըն-
դակոծությունը, երբ պգացվել

է վառելիքի, տրանսպորտի
սուղ կարիք, երբ ուշ գիշեր-
վա ձորերը ցղվել են սարսափ-
ներով, անսահման քամին երբ
պատարագ է նվազել ոսկրա-
ցած ծառերի կողերին՝ քան-
դակագործն ու հրամանատա-
րը շարունակել են քարորու-
ման աշխատանքները, այնու-
հետև՝ քարի տեղափոխումը,
քարի տեղադրումը, տաշը,
քանդակը...

Չոկատի ապաստարանի
ներս բոլորի ձեռագրերը կան
հուշարձանի կառուցման գա-
ղափարը: Չարմանալի չթվա,
այո, կոխվ և... հուշարձան:
Ընդամենը մի քանի մետրի
վրա հրետակոծություն, կրա-
կոցներ, իսկ այդին՝ հուշար-
ձան է հառնում:
Լեոնը շոկատում հրետանա
վոր էր: Գործի էր դնում հրե-
տանից, եթե պետք էր, հեր-
թապահում էր կրակակետում,
զինվորի ամենատարբեր պար-
տականությունների մեջ էր:
Լեոնտեսանտն ասես մոռացել
էր քանդակագործի իր կոչու-
մը և անկասկած մի պահ ծխում

Ս. ԲԱԲԱՉԱՆՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆՔԵՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՆ



այն երբևէ նպատակ չունի հովանա վորել հանցագործին: Իրավունքի ապահովումը կատարվում է օրենքով սահմանված կարգով: Ավելացնենք նաև, որ մեղավոր անձանց ակնհայտ խիստ պատժելը կամ անմեղ մարդուն պատժելը դիտվում է որպես օրինականության կոպիտ խախտում:

Ընթերցողին հետաքրքիր է իմանալ, թե քննված քրեական գործերից որոնք են ավելի տարածվածն ու հատկանշականը և եթե կարելի է մեկ-երկու օրինակ բերել:

Գույքի հափշտակումը գողության միջոցով, ավտովթարները, իսկական զինվորական ծառայությունից խուսափելը, ապօրինի գեներալ հափշտակումը, ձեռք բերումն ու օգտագործումը և այլն:

Անչափահասներ Վալերիկ Աղամալյանը, Սենիկ Ղուշունցը, Գուրգեն Վանեսյանը մտել են քաղաքացու բնակարան, գողացել 40 հազար ռուբլու գույք: Կամ ինչ անուն կարելի է տալ Արտավազը Խաչատրյանի, Կարո Սարգսյանի, Արա Ավետիսյանի (Գորիս քաղաքի բնակիչներ) և այլոց արարքին, որոնք խուսա-

մա փոխարինվել է տուգանքով: Օրինակ, գույքի հափշտակումը գողության միջոցով (հոդված 86) պատժվում է ազատազրկման մինչև երկու տարի ժամանակով կամ տուգանքով 2000-ից մինչև 5000 ռուբլու չափով: Գույքի հափշտակումը յուրացնելու, վատնելու կամ պաշտոնական դիրքը չարաշահելու միջոցով (հոդված 90) պատժվում է ազատազրկման մինչև երեք տարի ժամանակով կամ տուգանքով 3000-ից մինչև 6000 ռուբլի: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 97 հոդվածով գույքը անգույնությամբ ոչնչացնելու համար տուգանք է սահմանվում 10000-ից մինչև 15000 ռուբլի, 156 հոդվածով սպեկուլյացիայի համար՝ 5000-ից մինչև 10000 ռուբլի: Մի շարք այլ հոդվածներով (162—1, 155—1, 162—2, 163—3) տուգանքներ են սահմանված 10000-ից մինչև 15000 ռուբլի:

Չե՞ր կարծիքով այդ փոփոխությունները կարող են որոշակի դեր խաղալ իրավական պետության ըստեղծման ճանապարհին:

Ինչ խոսք, իրավական պետություն ստեղծելու համար ընդունված օրենքները պետք է ունենան գերակայում դիրք և բոլոր կազմակերպությունները, պաշտոնատար անձինք ու քաղաքացիները ենթարկվեն դրանց: Պետությունն էլ իր հերթին պետք է կրի պատասխանատվություն և պաշտպանի նրանց օրինական շահերը:

Վերջերս երևանում տեղի ունեցավ հանրապետության իրավապահ մարմինների և գործադիր իշխանությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ ՀՀ նախագահն էր ելույթում առանձնապես նշեց, որ որոշ պաշտոնատար անձինք, հատկապես պատգամավորները միջամտում են դատարանի գործունեությանը: Ի՞նչ կասե՞ք այդ մասին:

Մեզ մոտ նման փաստեր բարեբախտաբար առայժմ չկան: «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանության անկախությունը ապահովելու և դատարանների դերն ու հեղինակությունը բարձրացնելու նպատակով ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ քրեական օրենսգրքում կատարվել են փոփոխություններ և օրենսգրքը լրացվել է 191—1, 191—2, 191—3, 191—4 հոդվածներով: Այսպես, միջամտությունը դատական գործերի վարմանը (հոդված 191—1) պատժվում է ուղղիչ աշխատանքներով մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանքով 200-ից մինչև 500 ռուբլի: Իսկ եթե նույն գործողությունները կատարվել են պաշտոնական դիրքի օգտագործումով, պատժվում են ազատազրկման մինչև երկու տարի ժամանակով կամ ուղղիչ աշխատանքներով նույն ժամանակով: Դատավորին կամ ժողատենակալին սպառնալը (հոդված 191—2) պատժվում է ազատազրկման մինչև երեք տարի ժամանակով կամ ուղղիչ աշխատանքներով մինչև երկու տարի ժամանակով: Համապատասխան պատժամիջոցներ են սահմանված նաև 191—3, 191—4 հոդվածներով:

Դատաիրավական ռեֆորմի հարցը նախատեսված է քննարկել ՀՀ խորհրդարանում: Չե՞ր կարծիքն այդ մասին:

Դատական ռեֆորմը կարևոր նշանակություն պետք է ունենա անձի իրավունքների դատական պաշտպանության գործում և, անշուշտ, փոփոխություններ կատարվեն համակարգում: Այդ հարցում կան տարբեր տեսակետներ: Առաջարկվում է ըստեղծել միջին օրակի, տնտեսական, անկախ սահմանադրական դատարաններ: Տեսնենք, թե խորհրդարանը ինչ վերաբերմունք հանդես կբերի:

Իսկ դատավորների իրավիճակի մասին որևէ փոփոխություն չի՞ ըստ պատժում:

Գիտե՞ք ի՞նչ, առայժմ մեզ մոտ գործում են 1989 թվականի նույնքերի 13—ից ընդունված նախկին ԽՍՀ Միության և դատարանակազմության մասին օրենսդրության հիմունքները, ինչպես նաև դատավորների իրավիճակի մասին օրենքը, որն ընդունվել է 1989 թ. օգոստոսի 4-ին: Հուսով եմք, որ առաջիկայում դատավորների կարգավիճակի մասին անհրաժեշտ փոփոխություններ կընտրվեն:

Պարոն Հարությունյան, ըստ էության շատ հարցերի մասին խոսվեց, բայց կա մի կարևոր բնագավառ, որն անտեսել հնարավոր չէ: Խոսքը վերաբերվում է աշխատանքային, բնակարանային, ամուսնաընտանեկան և այլ իրավահարաբերություններից ծագող վեճերին: Արդյոք, այդ ասպարեզում փոփոխություններ տեղի ունեցել են, թե՛ ոչ:

Քաղաքացիական իրավունքի ինստիտուտը իրոք ծանր և բարդ բնագավառ է: Այն բոլոր հարցերը, որոնք տարբեր առարկաներում չեն լուծվում կամ չեն էլ կարող լուծվել, ընթացք են ստանում միայն ժողդատարանում: Մեծ թիվ են կազմում առանձնապես ամուսնալուծությանը վերաբերվող գործերը: Բոլորս գիտենք, որ հատկապես ներկայումս ընտանիքը գտնվում է պետության հովանավորության ներքո: Անհրաժեշտ ուշադրություն է դարձվում մոր և մանկան իրավական պաշտպանությանը, ընտանիքի ամրապնդմանը: Այդքանով հանդերձ, ցավոք, ժողդատարանն դիմող, ապահարգան պահանջող ամուսինների թիվը շատ շատ է, որոնք տարբեր պատճառաբանություններ են մեջտեղ բերում: Ժողդատարանը ձգտում է հաշտեցնել ամուսիններին, վերականգնել ընտանիքի երբեմնի անդորրը, պաշտպան կանգնել մանկահասակ երեխաների շահերին: Սակայն երբ այդ բանը նրան չի հաջողվում, ապա ստիպված է լինում վճիռ կայացնել ամուսնալուծության մասին:

Փոփոխություններ կան աշխատանքային, բնակարանային, ամուսնաընտանեկան օրենսգրքերում: Ժողդատարանում գործող «Օրենսդրություն» ցուցանակը տեղեկություններ է պարունակում այդ մասին, և ցանկացողները կարող են օգտվել դրանից:

Ցավով է, բայց փաստ, որ առանձնապես վերջին ժամանակներս հողերի ապօրինի օգտագործումը սովորական երևույթ է դարձել առանձին հիմնարկ—ձեռնարկությունների և բնակիչների կողմից, ինչը հակասում է հողային օրենսդրության պահանջներին: Բացի այդ, մեծ չափերի են հասել անտառահատումները, որի պատճառով տուժում է հայրենի բնաշխարհը: Կարծում են, որ ժողդատարանը երկու դեպքում էլ անելիքներ ունի:

Նախքան դրան անմիջականորեն անդրադառնալ, ասենք, որ փոփոխություններ կան նաև հողային օրենսգրքում: Քաղաքացիներին հողը կարող է պատկանել ինչպես սեփականության, այնպես էլ ժամանակավոր օգտագործման, վարձակալական իրավունքով: Ժառանգական իրավունքի օբյեկտ է հանդիսանում այն հողը, որը տրամադրվում է գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն վարելու, տնամերձ օգտագործելու, բնակելի տուն կառուցելու համար: Ինքնակամ զբաղեցրած հողը ժառանգական իրավունքի օբյեկտ չի կարող լինել: Ժողդատարանը պատրաստ է այսուհետև ևս քննել ու համապատասխան ընթացք տալ այն բոլոր գործերին, որոնք վերաբերվում են հողային

օրենսդրության խախտումներին կամ հողն ինքնակամ օգտագործելուն: Ինչ վերաբերվում է անտառահատումներին, կանաչ տնկարկների պահպանությանը, ապա այդ հարցում ևս կան զգալի բացթողումներ, չնայած առկա է ՀՀ նախագահի անցած տարվա նույնքերի 8-ի հրամանագիրը:

Շատ հասկանալի պատճառով առանձին քաղաքացիներ անցած ձեռք ընթացքում իրենց բնակարանները տաքացնելու համար դիմեցին անվայել արարքի՝ ապօրինաբար կտրուեցին քաղաքի փողոցների ու դրա մերձակա անտառների շատ ծառեր: Այդ առթիվ ժողդատարան են ուղարկվել մի շարք հայցադիմումներ, և մեղավոր անձինք ենթարկվել են պատասխանատվության: Մենք պարտավոր ենք քարոզչական աշխատանքն այն աստիճան մոտեցնել, որ ոչ մի քաղաքացի այլևս ձեռք չմեկնի ծառերին ու կանաչ տնկարկներին:

Իրավապահ մարմինների աշխատողների խորհրդակցությունում ՀՀ նախագահն անդրադարձավ նաև զանգվածային լրատվության միջոցների և այդ մարմինների կապի մոտեցմանը, դրանց համագործակցված աշխատանքին:

Այդ ինքն ևս գտնում են, որ այդ կապը պետք է ամուր լինի: Իրավապահ մարմինների գործունեությունը որքան ավելի սիստեմատիկաբար լուսաբանվի մամուլում, այնքան ավելի կշահի գործը, կբարձրանա բնակչության զգոնությունը, յուրաքանչյուր ոք իրեն պատասխանատու կզգա կատարած ածօրինական քայլի համար:

Եթե կարելի է մի քանի խոսք ասել ժողդատարանի և իրավապահ մյուս մարմինների, ինչպես նաև հիմնարկ—ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ համագործակցության մասին:

Այդ համագործակցությունն անչափ կարևոր է: Առանց ՆԳ բաժնի, միջ-ընթացային դատախազության հետ սերտ համագործակցության, մեր աշխատանքը չի կարելի պատկերացնել: Բացի ամենօրյա կապերից, նրանց հետ միասին տարեկան մի քանի անգամ ամփոփում ենք հանցագործությունների դեմ մղվող պայքարի արդյունքները, նշում միջոցառումներ օրինականության ամրապնդման ուղղությամբ: Ինչ վերաբերվում է հիմնարկ—ձեռնարկություններին, կազմակերպությունների հետ ժողդատարանի ունեցած կապերին, սպա դրանք որքան ամուր լինեն, այնքան ավելի լավ: Մի շարք քրեական, քաղաքացիական գործերով դատարանի մասնավոր որոշումները, միջնորդագրերը՝ հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառները և պայմանները վերացնելու նպատակով քննարկման են ուղարկվում հիմնարկ—ձեռնարկություններ, աշխատավորական կոլեկտիվներ, որը, ինչ խոսք, դրականորեն է անդրադառնում մեր գործունեության վրա: Այդ քննարկումներին հաճախ մասնակցում են նաև ինքս:

Պարոն Հարությունյան, դատարանը կոչվում է ժողովրդական: Դատարան—ժողովուրդ հասկացողությունը ձեր պատկերացմամբ:

Դատարանը կոչված է պաշտպանել ժողովրդի ու պետության շահերը: Առանց բնակչության ակտիվ աջակցության դատարանը չի կարող ինչպես հարկն է կատարել իր առաքելությունը, չի կարող մեղավոր անձանց նկատմամբ ճիշտ վճիռներ կայացնել: Վստահ են, որ բնակչությունն իր վերաբերմունքով առավել ակտիվորեն կնպաստի իրավապահ մարմինների գործունեության բարելավմանը:

Հարցազրույցը վարեց Ն. ԲԱԲԱՋԱՆՅԱՆԸ

ՀԱՐՑԱԶՐՈՒԹՅՈՒՆ Ե ՀՐԱՎԻՐՎԱԾ ԳՈՐԻՍԻ ԵՐԱՆԱՅԻՆ ԺՈՂԴԱՏԱՎՈՐ ԲՈՒՄԻ ԵՐՎԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Պարոն Հարությունյան, երկար տարիներ աշխատում եք իրավապահ մարմիններում: Ինչպե՞ս եք պատկերացնում դատարանը պետական մարմինների համակարգում:

Յուրաքանչյուր պետություն ունի իր բարձրագույն իշխանությունը, որն իրականացվում է օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջոցով: Միայն դատարանն է, որ իրականացնում է արդարադատությունը քրեական և քաղաքացիական գործերը քննելու միջոցով: Դատական նրստերում քննվում են քրեական, քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, վարչաիրավական, կենցաղային և այլ բնույթի հարաբերություններից ծագող վեճեր, հատուկ վարույթի գործեր, դրանց ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով տալիս արժանի լուծում:

Երկի շատ են նման բնույթի գործերը, և դատարանը ծանրաբեռնված աշխատում է:

Անշուշտ, շատ են: Դատարանն էլ պակաս ծանրաբեռնված չի աշխատում: Միայն 1992 թվականին ժողդատարանը քննել է 51 քրեական գործ՝ 81 անձի նկատմամբ և 218 քաղաքացիական գործ: Կարծում են՝ այդ թվերն ինքնին վկայում են դատարանի ծանրաբեռնված աշխատանքի մասին:

Շեղաբերքի է՝ քրեական գործերով ինչպե՞ս են իրականացվում պատժի անհատականության սկզբունքը և մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը:


Պատիժ նշանակելիս ժողդատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հասրակական վտանգավորության աստիճանը, հանցավորի անձնավորությունը և գործի այն հանգամանքները, որոնք մեղմացնում կամ ծանրացնում են պատասխանատվությունը: Որքան էլ տխուր է ասելը, թաքցնել չեն կարող. անցած տարում ժողդատարանի վճռով ազատազրկման է դատապարտվել 21 հոգի կամ ընդհանուր դատվածների 47 տոկոսը: Ընդ որում, ազատազրկվածներից 11-ը նախկինում դատվածներ են եղել, 18-ը՝ աշխատող, 8-ը՝ հանցագործությունը կատարել է հարբած վիճակում: Ինչ վերաբերվում է մեղադրյալի, անբաստանյալի պաշտպանության իրավունքի ապահովմանը,

փում են իսկական զինվորական ծառայությունից: Նման օրինակներ կարելի է շատ բերել ցույց տալու համար, որ մեր շարքերում կան մարդիկ, երիտասարդներ, որոնք իրենց անվայել արարքներով հասարակությանը վատ օրինակ են ծառայում և վաղ թե ուշ կանգնում դատարանի առջև: Իսկ դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքով, ուզած—չուզած նրանց նկատմամբ սահմանում է համապատասխան պատիժներ:

Պարոն Հարությունյան, մեզ հայտնի է, որ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել վարչական իրավախախտումների, քրեական օրենսգրքերում: Ընդհանուր առմամբ ինչպե՞ս կբնութագրեք դրանք: Եվ, եթե հնարավոր է, նշել փոփոխությունները:

Այո, կատարվել են մի շարք փոփոխություններ ու լրացումներ, որոնք պայմանավորված են հողի, արտադրական մյուս միջոցների սեփականաշնորհման, տնտեսական բարեփոխումների մասին ՀՀ օրենքների ընդունմամբ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքում ունեին 143 հոդված, որը վերաբերվում էր անձնական գույքի գողությանը կամ 90—1 հոդվածը՝ պետական, հանրային գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակությանը: Ներկայումս դրանք հավասարեցվել են, քանի որ օրենքը ոչ մի տարբերություն չի դնում պետական ու անձնական գույքի, ունեցվածքի գողությունների միջև: Այդ տեսակետից վերացվել են քրեական օրենսգրքի 83, 90—1, 98—1, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 150—1, 154, 155 և 161 հոդվածները: Բացի այդ, եթե նախկինում խոշոր չափերի հափշտակություն է սահմանված եղել 2500, իսկ առանձնապես խոշոր չափերի՝ 10000 ռուբլին, ապա ներկայումս, շուկայական հարաբերությունների հաստատման, գների ազատականացման պայմաններում խոշոր չափը դիտվում է մինչև 50000 ռուբլին, իսկ դրանից բարձրը՝ առանձնապես խոշոր: Քրեական օրենսգրքը լրացվել է 155—1, 162—2, 162—3 և 152—4 հոդվածներով, որոնք վերաբերվում են հարկային կանոնների խախտմանը: Կարևոր է նշել նաև, որ մի շարք հոդվածներով որպես պատիժ ունենում ուղղիչ աշխատանք, որը հի-

Գ Ա Ր Ո Ւ Ն Ի . . .



Արի գութան, վարի գութան...

Ա Ր Տ Ա Ս Ա Հ Մ Ա Ն Ո Ւ Մ

ԱՂՐԲԵՋԱՆԻ ՓՈՒՎԱՐՉԱՎԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Աղրբեջանից թուրքիա ձգվող նավթամուղը կարող է անցնել Հայաստանով, եթե Երևանը երաշխավորի նրա անվտանգությունը. «Թյուրքիա ղեյի նյուս» թերթում հրատարակված հարցազրույցի ժամանակ հայտարարել է Աղրբեջանի առաջին փոխվարչապետ Աբաս Աբասովը: Նա նշել է, որ այդ տնտեսական համաձայնագիրը կարելի է կնքել նույնիսկ Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավորման բացակայության պայմաններում:

Ա. Աբասովը նշել է, որ Աղրբեջանը... պատրաստ է թեկնոգ վաղը Հայաստանի հետ կրակի դադարեցման պայմանագիր կնքել:

Աղրբեջանից թուրքիա ձգվող նավթամուղի կառուցման համաձայնագիրը ստորագրվել է անցած շաբաթ: Բաքվից նավթամուղը ձգվելու է դեպի Միջերկրական ծովի ափի մոտ գտնվող Ջեյխան քաղաքի շրջան: Նրանով տարեկան մղվելու է միջին հաշվով 25 միլիոն տոննա նավթ: Նավթամուղի երկարությունը ավելի քան 1000 կիլոմետր կլինի:

ԹՈՒՐԿԻԱՆ ԼԱՎԱՏԵՍՈՒՐԵՆ Է ՏՐԱՄԱԴՐՎԱԾ

ԱՆԿԱՐԱ: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հիքմեթ Չեքիլը հայտարարեց, որ լավատեսորեն է տրամադրված Կովկասում խաղաղության ու կայունության հաստատման նկատմամբ: Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած հեռախոսազրույցից հետո նա հույս հայտնեց, որ աղրբեջանական և հայկական տերությունների ղեկավարների հաշտարար մտեցումը կողմերին թույլ կտա համաձայնության գալ բանակցություններում: Չե-

թիկը նշեց, որ երկրների նախագահներն էլ դրականորեն են ընկալել հայ աղրբեջանական հակամարտությունը կարգավորելու թուրքա-ռուսական ջանքերը:

Թուրքիան և Աղրբեջանը, գրել է «Թերքիշ դեյլի նյուս» թերթը. համաձայնության եկան, որ Բաքվից նավթամուղը թուրքիայի տարածքով համեմու է միջերկրածովյան Յու՝մուլթալը նավահանգիստ: Ենթադրվում է, որ Բաքվի և Երևանի միջև հաշտության կայացման դեպքում մոտ ժամանակներս խողովակաշարը կարող է ձգվի Հայաստանով. ինչը էապես կկրճատի նրա երկարությունը:

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՎԱՐՉԱՎԵՏԸ ՀԱՆԳԵՍ Է ԳԱԼԻՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԴԱՂԱՐԵՅՆԵԼՈՒ ՕԳՏԻՆ

ԱՆԿԱՐԱ: Աղրբեջանի և Հայաստանի ղեկավարությունները պարտավոր են վերջ տալ Լեռնային Ղարաբաղում մղվող պատերազմին և նրա տեղ բանակցությունների սեղանի շուրջը. ասել է Թուրքիայի կառավարության ղեկավար Սուլեյման Դեմիրելը «Թյուրքիշ դեյլի նյուս» թերթում տպագրված հարցազրույցի մեջ: Բաքվի հետ լավ հարաբերությունների պահպանումը Հայաստանի Հանրապետության նորմալ գոյա տևման պայմանն է: Թուրքիան չի ուզում որևէ պետության նկատմամբ վարել պատմական թշնամանքի վրա հիմնված քաղաքականություն: Թուրքիայի քաղաքականությունը հիմնված է բարի դրացիության սկզբունքի վրա: Այս պատճառով էլ, նշել է Դեմիրելը, Թուրքիան համաձայնեց Հայաստանին մարդասիրական օգնություն ցույց տալուն:

ԱՐՄԵՆԴՐԵՍ — ԻՏԱՐ — ՏԱՍՍ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳՈՐԾՈՒՄ Է

4—5 տարի է. ինչ Գորիսում ևս ստեղծվել է բարեգործական

ընկերություն: Իր գոյության առաջին օրերից ընկերությունը կատարում է մարդասիրական աշխատանք: Ընկերության նախաձեռնությամբ քանցք տարբեր օգնություն է ցույց տրվել Արցախի հերոսական ժողովրդին: Առավել քան ուշագրավ է, որ ընկերությունը մոտիկից օգնել է Աղրբեջանից, Արցախից բռնի կերպով տեղահանված և Գորիսում ապաստան գտած հարյուրավոր փախստականների, որոնց այնուհետև ցույց է տրվել դրամական օգնություն, հոգ տարվել իրենց հայրական օջախները հարկադրաբար լքած մարդկանց հագուստեղենով, բնակարանային միջինում պայմաններով ապահովելու հարցերով:

Ընկերությունն ունի հոգևոր գրախանութ, դեղատուն, որոնց ծառայությունից օգտվում են շրջանի հարյուրավոր բնակիչներ:

1992 թվականի նոյեմբերից ընկերությանը կից Գորիսում գործում է ֆրանսիա-Հայաստան ճաշարանը, որտեղ պատրաստված բարձրորակ ճաշերից ամեն օր անվճար օգտվում են զառամյալ տարիքի, հաշմանդամ, միայնակ 170—200 տղամարդիկ ու կանայք: Ճաշարանի անձնակազմը՝ վարիչ Արդա Հարությունյանի, խոհարար Արշալույս Ավետիսյանի ղեկավարությամբ ամեն ինչ անում է սպասարկումը բարելավելու, ճաշերի որակը բարձրացնելու համար:

Ընկերությունը նախաձեռնել և անցած ամառը բացել է զոհված ազատամարտիկների երեխաների ճամբար, որը կգործի նաև առօրյա ամառը: Նրանց ընտանիքներից, մանկահասակ երեխաներին հաճախակի տրվում է սնունդամթերք, այդ թվում՝ կաթի փոշի և այլն:

ՊԱՐԳԵՎ ՔՈՉԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ա Ի

Պատգամավորների Գորիսի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեն խոր վիշտ է ապրում սահմանամերձ Շուռնուխ գյուղի մատուցներում զոհված ազատամարտիկներ

ՄՈՒՐԱԳ ԱՍՐՅԱՆԻ
ՍՏՅՈՊԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՎԱԶԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ԱՐԱՄ ԱՂԱՐԵՎՅԱՆԻ
ԱՆԱՏՈՒ ՅԵՎՈՆԵՆԿՈՅԻ

ողբերգական մահվան առթիվ և համբերություն ցանկանում հանգուցյալների ընտանիքներին ու հարազատներին:

Գորիսի Ա. Բակունցի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խորապես ցավակցում է կորեռա Սարգսյանին, նրա սիրելի հոր՝

Ա Ր Ա Մ Ա Յ Ի Ս Ի

անժամանակ մահվան առթիվ:

Գորիսի Ա. Բակունցի անվան միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվը վշտակցում է Անուշ Թունյանին, նրա սիրելի պապիկի՝

Ս Մ Բ Ա Տ Ի

մահվան առթիվ:

Գորիսի թիվ 4 միջն. դպրոցի 4-րդ «ա» դասարանցիները և դասուկ Լ. Զաքարյանը խոր վշտով ցավակցում են համազատարանցի Առաքելին, նրա սիրելի պապիկի՝

Մ Ի Խ Ա Յ Ե Լ Ի

մահվան առթիվ:

Գորիսի «Միկրոշարժիկ» գործարանի տնօրինությունը և աշխատավորական կոլեկտիվը ցավակցում են Գրիշա Սիլանյանին, նրա սիրելի հոր՝

ՍՄԲԱՏ .ՍԻԼԱՆՅԱՆԻ

մահվան առթիվ:

Խնձորեսկի Գ. Սևունցի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական և աշակերտական կոլեկտիվները վշտակցում են Հովիվ Շահազարյանին, նրա սիրելի մոր՝

Ա Ր Ե Վ Հ Ա Տ Ի

մահվան առթիվ:

Գորիսի թիվ 4 միջն. դպրոցի 10-րդ «Բ» դասարանի աշակերտները և դասուկ Գոհար Գևորգյանը ցավակցում են Մելադա Քանունցին, նրա ամուսնու՝

Վ Ա Ր Գ Գ Ե Ս Ի

մահվան առթիվ:

Գորիսի շրջկոմպի վարչությունը և ողջ կոլեկտիվը ցավակցում են աշխատակցուհի Սարուսյա Սարգսյանին, նրա սիրելի հորեղբոր՝

Մ Ի Ս Ա Կ Ի

մահվան առթիվ:

Գորիսի թիվ 4 միջնակարգ դպրոցի 8-րդ «Գ» դասարանի աշակերտները խոր վշտով ցավակցում են դասուկ Մելադա Ջանունցին, նրա ամուսնու՝ սիրելի

ՎԱՐԳԵՍ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ

վաղաժամ մահվան առթիվ:

Գորիս քաղաքի թիվ 4 միջնակարգ դպրոցի մանկավարժական և աշակերտական կոլեկտիվները խոր վշտով ցավակցում են Մելադա Ջանունցին, սիրելի ամուսնու՝

ՎԱՐԳԵՍ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻ

վաղաժամ մահվան առթիվ:

ՍԱՀՄԱՆ

ԳՆԴԱԿՈԾՎԵԼ ԵՆ ԴԻՐՔԵՐԸ

Մարտի 29—30-ը հայ-աղը բեջանական սահմանում իշխողը լարվածությունն էր: Չենքի տարբեր տեսակներից գնդակովել են համարյա սահմանամերձ բոլոր գյուղերն ու պաշտպանական դիրքերը: Կոռնիձորում վիրավորվել է մեկ մարտիկ, Ներքին Խնձորեսկում կան ավերածություններ:

ՎԵՐԱՆՎԱՆՎԵՅ ԱԶԳԱՅԻՆ

ԱՎԱԴԵՄԻԱ

Հայաստանի Հանրապետության նախագահի ս/ք մարտի 9-ի հրամանագրով 22 գիտությունների ակադեմիան վերանվանվեց գիտությունների Ազգային ակադեմիա: Հաշվի առնելով Վիկտոր Համբար-

ձումյանի բացառիկ վաստակը համաշխարհային գիտության զարգացման և Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմավորման ու ղեկավարման գործում, նախագահի հրամանագրով հանձնարարվել է բնության առնել Ազգային ակադեմիայի պատվաբար պրեզիդենտ ընտրելու հարցը. պահպանելով պետության կողմից նրան վերապահված արտոնությունները:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)

Կ Ո Ր Ե Լ Է

Տեղ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի 1984—1985 ուսումնական տարվա շրջանավարտ Միսակ Միշայի Աղամյանի ԱՐ 865575 համարի ատեստատը:

Համարել անվավեր:

Վերիշենի գյուղատնտեսական տեխնիկումի 1989—90 ուսումնական տարվա շրջանավարտ Ռուզաննա Ռազմիկի Հայրյանի թիվ 002038 համարի ղիպյունը:

Համարել անվավեր:

Իմբրագիր՝

Ս. Լ. ԱԼԵՔԱՆՅԱՆ

ՄԵՐ ՀԱՅՏԵՆ՝ 077000, Լ. Ս. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ
Հանրապետություն,
Գորիս, Նաբեկյանի 11
Քաղաքի մեջ գտնվող հասցեն
Ն. Ա. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ

ՀԵՌԱՆՈՒՆԵՐ. Խմբագիր 2—23—48, խմբագրի տեղակալ և հասարակական — քաղաքական կյանք բաժին՝ 2—11—24, տնտեսության, նախագահի բաժիններ՝ 2—11—22, գյուղական կյանք, մշակույթի, սոցիալական քաղաքականության բաժիններ՝ 2—36—84, հաշվապահ՝ 2—11—24:

ՀՀ կառավարության ազգային մամուլի ֆոնդի կողմից Գորիսի տպարանը
Հասցեն և հեռախոսային թիվերը
Թիվ 1, 2—11—24, 2—11—78, 2—14—32

Սեկ պայմանական մամուլ ԳՐ-պաշտակ 2223 Գրախ՝ 49185
Վկայագիր՝ 168 Բարձր տպագրություն:
Պատվեր՝ 15